

**Տ. ՆԱՐԵԿ ԱԲԵՂԱ ԱՎԱԳՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾԻ ՄԱՅՐ ՏԱճՐՈՒՄ
ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(16 մայիսի 2004 թ.)

«Ես եկի զի զկնանս ունիցին,
և առանձ եսս ունիցին»:
(Նով. Ժ10)

Սիրելի հավաքացյալ քոյրեր և եղբայրներ, Ռովիաննու Ավետարանի այս փողերը մեր միջի ընթացքն ուղղում են դեպի համայն մարդկության Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի անձը:

Ո՞վ էր Քրիստոս և ինչի համար աշխարհ եկավ...

Քրիստոս եկավ նախ, որպեսզի մարդո վերագրնի իր ասրվածասրեղ և ասրվածանման բնությունը և ասրվածապարզն իր առաքելությունը, որպեսզի մարդու մեջ վերսպին ծնվի Ասրված և ասրվածայինը դարձնի մարդկայինի փրկարն ու ուղեցույցը: Քրիստոսի մարդեղությունը ճշմարդկության թանձրացումն էր և իրականացումը կյանքի մեջ:

Ասրվածորդու մարդեղությունը, այժմնքն իր՝ որպես Ասրված մարդկային կյանքի մեջ գոյութենապես հայփնվելը, ասրվածհայքնությունը, հանդիպումն է Ասրծու և մարդու: Իր կյանքն աշխարհի վրա՝ միախառնումն է ասրվածայինի և մարդկայինի:

Քրիստոս աշխարհ եկավ մեղավորներին ապաշխարության բերելու. «Ես արդարներին կանչելու չեմ եկել, այլ՝ մեղավորներին» (Մատթ. Թ-13), ևան «Մարդու Որդին եկավ փրնքրելու և փրկելու կորածին» (Ղոկ. Ժ-10): Ռովիաննու Ավետարանչի վկայությամբ՝ «Ասրծու Որդին հայփնվեց, որ քանի սարանայի գործը» (Ա Նով. Գ-8): Քրիստոսի աշխարհ գալով ամբողջացան օրենքն ու մարգարեւությունները. «Մի կարծեք, թե Օրենքը կամ մարգարեներին չնշելու եկա. չեկա ջնշելու, այլ՝ լրացնելու» (Մատթ. Ե-17):

Քրիստոս աշխարհ բերեց հավիքնենական ճշմարդկությունը: Շապ իմաստուն մարդիկ շար ավելի գեղեցիկ բաներ են ասել ճշմարդկության մասին, բայց Քրիստոս՝ Ասրծու Որդին, չխոսեց միայն ճշմարդկության մասին՝ այս թղթի վրա արձանագրելով, այլ եղավ ճշմարդկությունը. «Ես եմ ճանապարհը, ճշմարդկությունն ու կյանքը» (Նով. Ժ-6)՝ իր կյանքի օրինակով մարդկությանը ճշմարդկության կենդանի պատկերը դրալով: Այս ամենից զարդ, Քրիստոս, աշխարհ գալով և ապրելով մարդկանց մեջ, ճշմարդկ կենսած դպինց, որը մեզ համար մի նոր կյանք եղավ. «Ես եկա, որպեսզի կյանք ունենան և առավել ևս ունենան» (Նով. Ժ-10):

Այդ ասրվածապոր կյանքը դարձավ սրեղծագործության խանգարված վիճակի մեջ կարդ ու ներդաշնակություն սրբեղութ ուժը:

Քրիստոսավանդ կյանքի ապրումը երկնքից իշավ ու երաշփի վերածված մարդու մեջ վերսպին ցանեց ասրվածության ցողը և վերանորոգեց մարդու կյանքը՝ այն դարձյալ Ասրծու հետ հաղորդության բերելով և առաջնորդելով դեպի երջանկություն:

Ասդվածուսոյց ճշմարդության այս խորհուրդը խորասույզ խորհրդագործեց հայի լյանքը բոլոր դարձությունները: Դափի հավաքը և սփեղծագործություն լարված և սլաքված այդ կյանքը մեզ սովորեցրեց քաղից ու հողից փաճար ու վանք կերպել, բեր ու քաղաք կառուցել, կաշվից՝ մագաղաթ պատրաստել, մագաղաթը. Օչականում հավերժահանգիստ գրած Ս. Մերոպին հայքնած էր իսկ գրով, խորհրդագործել՝ գրի ու մանրանկարի վերածելով, թշնամու դեմ արիանալ ու «Մահ իմացեալ՝ անմահութիւն» նշանաբանով Ազարայից մինչև Սարդարապար սիրալի դրվագներ արձանագրել, քանդողին կառուցելով պարախանել, սրով նվաճողին՝ հոգեկան մեծությամբ ու կյանքի հավերժությամբ նվաճել և այսպես գոլկա՝ միշտ հուսաղով, հուսալ՝ սփեղծագործելով, մինչդեռ որիշներն անհետացան... նվաճելով:

Արարջից հեռացած, իր ասդվածագիտ պարկերին անհավաքարիմ մարդը Քրիստոսի ցոյց դրված կյանքի օրինակով վերադարձավ Ասպծուն, վերազգեսդրավորվեց իր ասդվածադրոշմ թնության նկարագրով: Մարդը հաճախ փորձության է ենթարկվում այդ նկարագրի աղարթման մշտական սպառնական փրանգով: Եղել են ժամանակներ, երբ ներքին ազդակներն ու արդարին ազդեցությունները մեր ժողովրդի վրա այնպես են ներգործել, որ նա շեղվել է Քրիստոսավանդ կյանքի ճիշտ ընթացքից և դարապարփած եղել պարմությանը թնություն հանձնել ապրելու իրավունք սրբանալու համար:

Նիրավի, պարմության ընթացքում, երբ մեր ազգը կորցրեց իրեն ժառանգություն թող-նըված Ասդվածություն կենսածնը, միանշանակ կարող ենք ասել, որ սայթարեն...

Ամեն անգամ, երբ մեր ժողովուրդն ամուր չպահեց, նույնիսկ ավելին, երբ չապրեց ասդվածուսոյց կյանքով, թշնամիները բազեների նման հավաքվեցին մեր ազգի վրա և հայոց լինեները, որպես գերեզմանաքարեր, ուղեցին ներկ մեր պարմության վրա:

Իսկ այս ժամանակ, երբ մեր ժողովուրդն ասդվածավանդ կյանքի փիպարով ու նկարագրով աղեցուն ժամանակներ ունեցավ, այդ գերեզմանաքարերը վերածեց խաչքարերի, Քրիստոսի խաչի հաղթանակած զաղափարով և հարության ավերիսը միշտ պայծառ պահելով մեր հայրենի աշխարհի վրա և ազգային գրյության հյուսվածքի մեջ:

Եվ մանավանդ այսօր, ներկա ժամանակներում, երբ նյութական պայմանների առարկության և կյանքի բարգավաճ դրությունների սփեղծությունը ու նրանցից առաջ եկող մակերեսայնական և վաղանցով կանոնական հաճույքների առավության հենքնանքով մարդու ավելի հեշտ և արագ կերպով սայթաբումների վրանցին է ենթարկվում, Քրիստոսի թողած կյանքն առավել ևս այժմնականություն և կենսականություն է սրբանում, քանի որ Տիրոջ կյանքի և արարքների լուսագիր պարմությունը սահմանադրությունն է մարդու կյանքի երջանկության:

Ուստի երբ Ասդվո պարզեած լույս-կյանքը բացակայի մեր միշից, խավարին մարտնչած կույր գրյության կվերածվի մեր կյանքը:

Միրելի հավափայացալներ, պեսք չէ փարվել աշխարհի խարուսիկ հրապույրներով: Շովի ալիքների պես նրանք բարձրանում են, հաճախ փրփում և ապա փրփուրի պես է անհետանում: Աշխարհայնապաշտ դարձող ներկա մթնոլորտի մեջ, աշխարհից վեր մնալու, աշխարհայինից չնվաճելու և նրա հրամայականի ներքո չմնալու համար, անհրաժեշտ է, որ փիրափոր կյանքի ծևն ամուր և անխախտ մեր կյանքում, որպեսզի հավել իիշենք և երբեք զմոռանանք կյանք պարզուղ ասդվածախոս այս գողերը. «Ես եկա, որպեսզի կյանք ունենան և առավել ևս ունենան» (Հովհ. Ժ 10):

Ընորհը, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամեննեսանս. ամէն: